# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**17 սեպտեմբերի 2020 թվականի N 216 -Ա**

### «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 10-ի ՍԴ/2/0062/02/18 վճիռը և նշված քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 2020 թվականի օգոստոսի 19-ի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1.Լիլիթ Առաքելյանին 2020 թվականի սեպտեմբերի 17-ից վերականգնել «Սյունիքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում:

2. 2020 թվականի սեպտեմբերի 17-ից լուծել «Սյունիքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնը զբաղեցրած Անժելա Թումանյանի հետ 2018թվականի ապրիլի 9-ին կնքված N 10 աշխատանքային պայմանագիրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

17.09.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. սեպտեմբերի 17
ք. Կապան